# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԿՆԵՑ ԼՂՀ

Սեպտեմբերի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկօրյա այցով մեկնեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ մասնակցելու ԼՂՀ հռչակման 20-ամյակին նվիրված միջոցառումներին:

Նորին Սրբությանն ուղեկցում են Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, ՀՀ Զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը եւ գավազանակիր Տ. Անանիա աբեղա Ծապուրյանը:

Սեպտեմբերի 2-ին, Արցախում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց ԼՂՀ հռչակման 20-ամյակին նվիրված միջոցառումներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## «ՌԵՆՈՎԱԲԻՍԻ» 15-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 1-3-ը, Գերմանիայի Ֆրայզինգ քաղաքում տեղի ունեցավ գերմանացի կաթոլիկների «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության 15-րդ միջազգային համաժողովը: Համաժողովին մասնակցում էին 300 ներկայացուցիչներ 29 երկրներից: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, որպես Քույր Եկեղեցու ներկայացուցիչ, սույն ժողովին մասնակցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի փոխտեն Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում էին Կենտրոնական եւ Արեւելյան Եւրոպայի գյուղական համայնքների կառուցվածքային փոփոխությունների ազդեցությանը գյուղերում ապրող մարդկանց հավատքի եւ կյանքի պայմանների վրա:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՃԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 6-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երուսաղեմի Տաճարականների միաբանության պատվիրակությանը՝ գլխավորությամբ Երուսաղեմի տաճարականների հունական վաշտի գլխավոր հրամանատար Պողոս Չորակյանի:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով պապփիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուրախություն հայտնեց, որ կազմակերպությունը սերտորեն համագործակցում է եկեղեցիների հետ եւ համատեղ առաքելություն իրականացնում՝ ի սեր եւ ի բարօրություն մարդկության:

Հանդիպման ընթացքում պրն. Չորակյանը Նորին Սրբությանը ներկայացրեց միաբանության գործունեությունն ու առաքելությունը, որի շրջանակներում մարդասիրական զանազան ծրագրեր են իրականացվում, ինչպես նաեւ օգնություն ցուցաբերվում Երուսաղեմի չորս պատրիարքություններին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ԱՐՄԵՆԻԱ» ԱՌԱԳԱՍՏԱՆԱՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

Սեպտեմբերի 6-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Արմենիա» առագաստանավի անձնակազմին՝ գրող, հրապարակախոս Զորի Բալայանի ղեկավարությամբ:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ նավարկությունը բարեհաջող ընթացք է ունեցել: «Տեղյակ ենք այն խանդավառությանը, որ ձեր այցելություններով ստեղծում էիք հայ համայնքներից ներս՝ հպարտության զգացում փոխանցելով մեր զավակներին ձեր քաջարի այդ արարքով: Նմանատիպ երեւույթները նոր ոգեւորություն են ներարկում մեր զավակների հոգիներից ներս եւ լիցք են հաղորդում նրանց՝ շարունակելու իրենց ազգապահպան գործունեությունը», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցելով ներկաներին: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ հայ ժողովրդի մեջ այս իրադարձությունը կստանա լավագույն գնահատականը եւ կունենա իր արժեւորումը:

Այնուհետեւ փիար Զորի Բալայանն «Արմենիա» առագաստանավի անձնակազմի անունից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար:

Հանդիպումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Տաճարում «Պահպանիչ» աղոթքով օրհնեց Իջման Ս. Սեղանի առջեւ ծնրադրած նավազնացներին՝ մեկ անգամ եւս մաղթելով նորանոր հաջողություններ իրենց հետագա ծրագրերում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԿՈՆՖԵՐԱՆՍ ԲՈՍՍԵԻ ՎԱՆՔՈՒՄ

Սեպտեմբերի 7-10-ը Իտալիայի Միլան քաղաքի մոտ գտնվող Բոսսեի վանքում տեղի ունեցավ 19-րդ միջազգային էկումենիկ կոնֆերանսը՝ «Աստուծո խոսքը հոգեւոր կյանքում» թեմայով:

Ժողովին մասնակցում էին Կաթոլիկ, Ռուս Ուղղափառ, ինչպես նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ սույն ժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը:

Ժողովի ընթացքում հոգեշնորհ Հայր Սուրբի կողմից կոնֆերանսի մասնակիցներին ընթերցվեց Հայրապետական ուղերձը, որում մասնավորապես ասվում էր. «Քրիստոնյա ժողովուրդների հոգևոր ուժն ու զորությունը, հավատքի անշեջ լույսը սնվում են աստվածային խոսքի օրհնաբեր աղբյուրից: Աստվածային ճշմարտությունը արտահայտվեց խոսքով, որն իր զորությամբ վերափոխում է մարդկային կյանքը:

Մեծապես գնահատելի է, որ այս համագումարին դուք համախմբվել եք զեկուցումներ ներկայացնելու եւ քննարկումներ իրականացնելու հոգևոր կյանքում Աստվածաշնչի կարևորության, Ընդհանրական Սուրբ Հայրերի եւեկեղեցական հեղինակների սուրբգրական աշխատությունների եւ Աստծո խոսքով ներշնչված վանական ու ճգնավորական մեծ փորձառության վերաբերյալ: Աստծո խոսքը այն ամփոփող գիրը չէ միայն, այլ գրից ավելին՝ հոգին, որն արտահայտվում է խոսքի միջոցով՝ համաձայն Սուրբ Պողոս առաքյալի հաստատման. «Գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ» (Բ Կորնթ. Գ 6):

Այսօր, երբ արդիական տեխնոլոգիաների օգնությամբ տեղեկություններն արագությամբ սփռվում են աշխարհով մեկ, մեր կյանքում նկատվում է խոսքի առատություն, սակայն այդ բյուրավոր խոսքերի մեջ անհրաժեշտ է աստվածային խոսքի գերակայությունը, որպեսզի հասարակությունները, մարդիկ ապրեն փոխըմբռնման, համերաշխության եւ քրիստոսապատվեր սիրո մեջ: Ներկա ժամանակներում, երբ նաեւ սփռվում են զանազան կեղծ գաղափարներ՝ ճշմարտության շղարշով քողարկված, առավել հրատապ է դառնում անհրաժեշտությունը աշխարհում Աստծո խոսքի իմացության ու տարածման, որը պայծառակերպում է հոգիները եւ մնում անփոփոխ ու հավիտենական, ինչպես ասում է Քրիստոս. «Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի անցցեն» (Մատթ. ԻԴ 35)»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 10- ին, Վիրահայոց թեմի նախաձեռնությամբ, ՀՀ Սփյուռքի եւ Մշակույթի նախարարությունների հովանավորությամբ եւ ,Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամիե աջակցությամբ, Վրաստանի Սամցխե-Ջավախք նահանգի Ախալքալակ քաղաքի փոխառաջնորդարանում կայացավ Վիրահայոց թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միության համաժողով՝ «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին վիրահայ երիտասարդների կյանքում» թեմայով:

Համաժողովին մասնակցում էին շուրջ երեսուն վիրահայ երիտասարդներ մայրաքաղաք Թբիլիսիից, Բաթումից, Սամցխե-Ջավախքից եւ Վրաստանի այլ շրջաններից: Հավաքին իրենց մասնակցությունն էին բերել նաեւ թեմի հոգեւոր հովիվները:

Համաժողովը սկսելուց առաջ երիտասարդները թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ Ախալքալակի Սուրբ Խաչ եկեղեցում թեմի հոգեւոր դասի հետ միասինաղոթք բարձրացրեցին առ Աստված: Տաճարում հյուրերին ջերմորեն ողջունեց Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանը: Համաժողովը բացվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությամբ, որից հետո երիտասարդներին խոսքով դիմեցին Սամցխե-Ջավախքի առաջնորդական փոխառաջնորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանը եւ Վրաստանում ՀՀ դեսպանի խորհրդական Արտակ Կալաշյանը:

Համաժողովին երիտասարդները քննարկեցինվիրահայության համարարդիական խնդիրներ,

ինչպիսիք են՝ «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը երիտասարդների կյանքում» (զեկուցողներ՝ Միխեիլ Ավագյան եւ Ջեննարա Պետրոսյան), «Երիտասարդները եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին. միջերիտասարդական համագործակցություն» (զեկուցողներ՝ Լալա Գեւորգյան եւ Սեդա Ավանյան), «Աղանդավորություն եւ իրավիճակը շրջաններում» (զեկուցող՝Ինեսսա Սարուխանյան):

Ընթերցված զեկույցների շուրջ ծավալվեցին աշխույժ գործնական քննարկումներ: Երիտասարդները մտահոգություն հայտնեցին ինչպես աղանդավորության, այնպես էլ կրավորական երիտասարդ զանգվածների համար, ովքեր փարաբնիկ ազդեցությունների ներքո հեռանում են ազգային-եկեղեցական եւ հոգեւոր-մշակութային կյանքից: Հանդիպմանը կարեւորվեց նաեւ Մայր Հայրենիքի եւ Սուրբ Էջմիածնի հետ ամուր կապերի հաստատումը, ինչպես ուխտագնացությունների կազմակերպման միջոցով, այնպես էլ Հայաստանում կազմակերպվող համահայկական միջոցառումներին գործուն մասնակցություն բերելով:

Ժողովականների կողմից որոշում կայացվեց Թբիլիսիում սովորող, շրջաններից եկած հայ ուսանողների հետ հաստատել սերտ կապեր, արագացնել հովվությունններին կից եկեղեցասեր երիտասարդաց կառույցների ձեւավորումը: Երիտասարդների կողմից առաջարկություն հնչեց թեմի քահանաների հետ այցելել հայաբնակ տարբեր համայնքներ եւ եկեղեցական արարողությունների անցկացման եւ ժողովրդին Հայոց Եկեղեցու պատմությունը, տոները բացատրելու միջոցով ժողովրդական լայն զանգվածներին ուղղորդել դեպի եկեղեցի:

Համաժողովի մասնակիցներին հուզող բազմաթիվ հարցերին պատասխանեցին հավաքի մասնակից հոգեւոր դասի ներկայացուցիչները:

Ժողովն ավարտվեց Սրբազան Հոր պահպանիչ աղոթքով եւ որոշվեց հաջորդ հավաքը դեկտեմբեր ամսին կազմակերպել մայրաքաղաք Թբիլիսիում:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում-սեմինար՝ նվիրված տարրական դպրոցում «Քրիստոնեական կրթություն» առարկայի փորձնական ծրագրին:

Նախընթաց տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի մասնագետների եւ «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի լավագույն ուսուցիչների անդամակցությամբ ձեւավորվել էր մասնագիտական աշխատանքային խումբ, որը մշակել էր 2-4-րդ դասարանների համար քրիստոնեական կրթության ուսումնական փորձնական ծրագիր եւ հրատարակության պատրաստել դասագրքեր՝հաշվի առնելով ՀՀ հանրակրթական դպրոցում տարրական քառամյա ուսուցման պահանջներն ու առանձնահատկությունները:

ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի՝ «Հայ Եկեղեցու պատմություն» առարկային առնչվող խնդիրները լուծելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին հրամանով ստեղծվել էր հանձնախումբ, որի երաշխավորությամբ հանրապետության մի շարք դպրոցների 2-4-րդ դասարաններում մեկ տարի փորձաշրջանով ուսումնասիրվելու է «Քրիստոնեական կրթություն» առարկան:

Առարկայի դասավանդման համար Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության համատեղ համաձայնությամբ ընտրվել են հանրապետության 25 դպրոցներ:

Առարկայի ներկայացմանը նվիրված հանդիպման ընթացքում ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը ողջունեց եւ շնորհակալություն հայտնեց «Քրիստոնեական կրթություն» առարկայի փորձնական ծրագրի մշակող հանձնախմբի անդամներին, շնորհավորեց պարբական դպրոցում քրիստոնեական կրթության ամրագրման համար՝ կարեւորելով եռաստիճան դպրոցում (տարրական դպրոց, միջին դպրոց, ավագ դպրոց) քրիստոնեական կրթության շարունակականության ապահովումը:

Հանդիպմանը ներկա էին նաեւ ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանը եւ ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչությունից Նարինե Հովհաննիսյանը, որոնք իրենց հերթին կարեւորեցին իրականացվող ծրագիրը:

Այնուհետեւ աշխատանքային խմբի անդամները 26 դպրոցների «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչներին ներկայացրեցին առարկայի փորձնական ծրագրի թեմաները, դասագիրքտետրի կառուցվածքը եւ դասավանդման առանձնահատկությունները:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԹԵՄ

Սեպտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վայոց Ձորի թեմ, ուր հանդիսապետեց Ս. Խաչ վանքի վերաօծման արարողությունը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Վանորեից տեսուչ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան վարդապետ Հակոբյանը, Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը, գավազանակիր Տ. Անանիա աբեղա Ծատուրյանը, Տ. Երեմիա աբեղա Աբգարյանը, Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը եւ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Վայոց Ձորի Արենի գյուղի մատույցներում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, մարզպետ Սերգեյ Բագրատյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ եւ թեմի բարերարներ: Արենիի բնակիչներն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծափողջույններով եւ աղուհացով դիմավորեցին Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Դռնբացեքի արարողությունն սկսվեց եկեղեցու նոր քանդակազարդ դռների առջեւ, ապա աղոթքից հետո «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի» շարականի ներքո ամենքը մուտք գործեցին եկեղեցի:

Տերունական աղոթքից հետո եկեղեցու բակում ժողովրդի անունից Նորին Սրբությանը ողջունեց Արենիի համայնքի ղեկավար Սերգեյ Սուքիսյանը: Այնուհետեւ բարիգալստյան խոսքով հանդես եկավ նաեւ թեմակալ առաջնորդ Աբրահամ Սրբազանը, որ Վեհափառ Հայրապետին ներկայացրեց եկեղեցու բարերարներ Սամվել Գրիգորյանին, Հարություն Ենոքյանին եւ Գրիգոր Գրիգորյանին, որոնց ազնիվ նվիրատվությամբ Ս. Աստվածածին եկեղեցուն տեղադրվել են նոր քանդակազարդ դռներ:

Այնուհետեւ Արենիի ժողովրդին իր օրհնության խոսքն ուղղեց Նորին Սրբությունը՝ պատգամելով հավատարիմ մնալ Տիրոջ պատվիրաններին եւ Հայ Եկեղեցու վարդապետությանը, փարված մնալ հոգեւոր արժեքներին եւ աստվածահաճո կյանքով ապրելով՝ իրենց նպաստը բերել ազգային կյանքին: Ի գնահատություն բարերարների եկեղեցանվեր ոգու՝ Վեհափառ Հայրապետի կողմից նրանց հանձնվեցին Հայրապետական օրհնության գրեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցի առիթով կազմակերպված ժողովրդական փոնախմբությունից հետո հրաժեշտ տալով Արենիի բնակիչներին՝ Նորին Սրբությունը մեկնեց Վայոց Ձորի մարզկենտրոն՝ Եղեգնաձոր քաղաք:

Առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցու առջեւ ժողովուրդը Վեհափառ Հայրապետին դիմավորեց ավանդական աղուհացով: Եկեղեցում կատարված համատեղ աղոթքից հետո Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց եկեղեցու տարածքում Ս. Վարդանանց եկեղեցու հիմքերի հայտնաբերման առիթով կանգնեցված քառաթեւ խաչքարի օրհնության արարողություն:

Օծման ավարտին Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով ողջունեց Եղեգնաձորի քաղաքապետ Սիրեկան Բալայանը: Այնուհետեւ առաջնորդ Աբրահամ Սրբազանն անդրադարձավ պատմական եկեղեցու հայտնաբերման կարեւորությանը եւ խորհրդին, ապա Նորին Սրբությանը հրավիրեց իր օրհնությունը բերելու ներկա ժողովրդին եւ խաչքարի բարերարներին:

Վեհափառ Հայրապետը շնորհավորեց եղեգնաձորցիներին խաչքարի կանգնեցման առիթով, որի օծումը կատարվեց Խաչվերացի տոնին: Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց Խաչի խորհրդին եւ նրանից ճառագող հրաշագործ զորությանը, որ դարեր շարունակ պահպանել, զորեցնդել եւ խանդավառել է հայ ժողովրդին: Խոսքի վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական օրհնության գրեր շնորհեց բարերարներ Սամվել Գրիգորյանին, Արթուր Սարգսյանին, Աշոտ Օրդուխանյանին եւ Սամվել Հովհաննիսյանին՝ իր մասնավոր գնահատանքը բերելով եկեղեցու հանդեպ ունեցած նրանց նվիրումի համար:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետի շքախումբը ուղեւորվեց դեպի Ս. Խաչ պատմական վանքը, որն ամբողջովին վերանորոգվել, բարեկարգվել եւ պարսպապատվել է բարերարությամբ ռուսաստանաբնակ Վարդան Հայրապետյանի: Վանքին կից կառուցվել է նաեւ հանդիսությունների նոր սրահ:

Օրհնելով Հայաստանի տարբեր շրջաններից այս առիթով ուխտի եկած հարյուրավոր հայորդիներին՝ «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո Ամենայն Հայոց Հայրապետը հոգեւորականաց թափորով առաջնորդվեց եկեղեցի, ուր կատարվեց եկեղեցու վերաօծման արարողությունը:

Արարողության ընթացքին Նորին Սրբությունը Սրբալույս Մյուռոնով օծեց Ս. Սեղանը, Նաթան եւ Արտակ Սրբազանները կատարեցին եկեղեցու սյուների օծումը: Վերջում Վայոց Ձորի թեմի առաջնորդ Սրբազանը վերստին ողջունեց Վեհափառ Հայրապետի այցը Վայոց Ձոր, ապա հրավիրեց Նորին Սրբությանն օրհնել ներկա հավատավոր ուխտավորներին:

Գոհություն հայտնելով Աստծուն պատմական տաճարի վերաօծման առիթով՝ Նորին Սրբությունը ներկայացրեց Խաչվերացի տոնի խորհուրդը, որ սերտորեն առնչվում է Ս. Խաչ վանքի հետ: Անդրադառնալով բազում ուխտավորների ներկայության արարողությանը՝ Վեհափառ Հայրապետը մասնավորաբար նշեց. «Հիրավի, ցնծության եւ բերկրանքի մեջ է մեր հոգին, որ դարերի ավանդույթը շարունակվում է այս սրբավայրի սրբազան կամարների ներքո, եւ մեր զավակները նախանձախնդրությամբ գալիս են այստեղ ուխտի, գալիս են իրենց խոնարհումը մատուցելու Քրիստոսի խաչափայտի մասունքին, գալիս են հաղորդակցվելու իրենց հայրերի սրբազան հավատքին, իրենց ուխտը վերանորոգելու առ Աստված, որ պիտի շարունակեն աստվածահաճո իրենց կյանքի ընթացքը բարի գործերով»: Նորին Սրբությունը հորդորեց հավատացյալներին, որ տոնի խորհրդին հաղորդ լինելով՝ ապրեն խաչի օրհնության ներքո երջանիկ ու գոհունակ կյանքով՝ աստվածփառաբանության խոսքերը իրենց շուրթերին:

Վեհափառ Հայրապետը նաեւ մասնավոր իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդին իր ժրաջան աշխատանքի համար՝ այս առիթով նրան շնորհելով պանակե: Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց մարզպետին եւ մարզային իշխանություններին՝ թեմի ծրագրերին եւ եկեղեցականաց դասին՝ ցուցաբերվող զորակցության համար:

Նորին Սրբությունը բարձր գնահատանքի արժանացրեց նաեւ Ս. Խաչ վանքի նորոգության եւ բարեկարգման բարերարին: Այս առիթով Նաթան եպիսկոպոսն ընթերցեց բարերար Վարդան Հայրապետյանին շնորհված Հայրապետական սրբատառ կոնդակը, որում մասնավորապես ասվում է. «Մեծարգո պրն. Հայրապետյան, ուրախ ենք Վայոց Ձորի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյանից տեղեկանալու Ռուսաստանի Դաշնության հասարակական կյանքում Ձեր բեղուն գործունեության մասին: Գովելի է, որ Դուք ազնիվ ու անհոգնաբեկ աշխատանքով արձանագրել եք մնայուն հաջողություններ մասնագիտական ասպարեզում, որոնք գնահատված են ՌԴ մեդալներով ու շքանշաններով:

Հայրապետիս համար անկեղծ գոհունակություն է, որ Դուք առ հայրենին ու առ մեր Սուրբ Եկեղեցին որդիական անկեղծ, ինքնաբուխ սիրով հանձն առաք հովանավորել Վայոց Ձորի Սուրբ Խաչ վանքի նորոգության եւ հանդիսությունների սրահի ու հովվատան կառուցման աշխատանքները: Ձեր առաքինի եւ աստվածահաճո այս նախաձեռնության շնորհիվ նոր կյանք պիտի ստանա հնամենի ուխտավայրը, որի օրհնաբեր եւ շնորհաբաշխ հարկի ներքո հավատացյալները դարեր շարունակ ապավինած Տիրոջ Սուրբ Խաչին՝ երկնային հովանին են հայցել իրենց օջախներին, մեր Եկեղեցուն, մեր երկրին ու ժողովրդին: Երանյալ եք Դուք. Ձեր անունը՝ որպես Հայ Եկեղեցու արժանավոր զավակի եւ ազգասեր բարեգործի, այսուհետ երախտագիտությամբ ու բարեմաղթանքներով պիտի հիշվի սրբավայրը կառուցած ու խնամած եկեղեցասեր հայորդյաց շարքին»: Հայրապետական կոնդակի ընթեցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն եկեղեցու բարերարի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանով:

Այնուհետեւ նորաօծ եկեղեցուն Հայոց Հայրապետի կողմից ընծայաբերվեց Ս. Հաղորդության սկիհ:

Վերաօծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետի օրհնությամբ մարզպետ Սերգեյ Բագրատյանը եւ բարերար Վարդան Հայրապետյանը կատարեցին բացումը վանքի տարածքում կառուցված ընդարձակ սրահի, որից հետո Նորին Սրբությունը ծանոթացավ կատարված աշխատանքներին, այցելեց նաեւ վերանորոգված վանատունը:

Վերջում տեղի ունեցավ ժողովրդական տոնախմբություն եւ մատաղօրհնություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՈՒՄԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սիրված եւ սպասված արարողություններից մեկն է նոր ուսումնական տարվա բացումը: Սա իր էությամբ բավականաչափ տպավորիչ եւ պատասխանատու պահեր կրող մի հանդիսություն է: Այս հանդիսության ժամանակ ոմանք առաջին անգամ են մտնում ճեմարանի կամարներից ներս իբրեւ ուսանող, իսկ ոմանք՝ վերջին: Ավար-

պելու եւ սկսելու այս խորհրդավոր միաձուլումից առաջանում է մի նվիրական բովանդակություն, որն իր էական նշանակությունն ունի ոչ միայն հոգեւոր ասպարեզի ներկայացուցիչների համար, այլեւ համայն ազգի, քանզի ճեմարանը վաղուց գիտակից եւ ազգասեր հայերի սրտի գլխավոր անդամներից մեկն է: Պատահական չէ, որ նոր ուսումնական տարվա բացման արարողությանը ներկա են գտնվում նաեւ աշխարհական հյուրեր, որ ցանկանում են տեսնել ապագա հոգեւորականների մուտքն իրենց հոգեւոր վերածնության եւ գիտակցական հասունացման օրրանը:

Այս անգամ ճեմարանի նոր ուսումնական տարվա բացումը կատարվեց սեպտեմբերի 13-ին: Հանդիսությունը կատարվում էր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Կոմիտասի անվան սրահում: Բացման հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով, ինչեցին Հայաստանի Հանրապետության եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի օրհներգերը, որից հետո ողջույնի եւ բացման խոսքասելու հրավիրվեց ճեմարանի տեսուչ՝ հոգեշնորհ Տ. Գեւորգ վարդապետ Սարոյանը:

Հայր սուրբն իր խոսքում ողջունեց ներկաներին եւ ոգեւորությամբ հայտարարեց ճեմարանի նոր ուսումնական տարվա բացումը: Հոգեշնորհ Հայր սուրբն ի լուր ներկաների զեկուցեց Վեհափառ Հայրապետին ուսումնական գործում կատարված նոր ձեռքբերումների փաստը եւ ներկայացրեց դրանց առաջխաղացման հետ կապված հետագա ծրագրերը: Անդրադառնալով ճեմարանական առաքելությանը՝ Հայր սուրբը նշեց, որ ճեմարանն իր մեջ ժողովել է դարերի ընթացքում կուտակված հոգեւոր եւ բարոյական բազում մասնիկներ, որոնցովկրթվում եւ դաստիարակվում է հոգեւորականների ապագա սերունդը: Հայր սուրբը նշեց նաեւ, որ հոգեւոր ներաշխարհի զարգացման հետ ճեմարանն ապահովում է ազգային բարոյական եւ մշակութային գերագույն արժեքների պահպանումը: Հայր սուրբը տեսչության գլխավոր նպատակներից մեկն է համարում՝ ապահովել ճեմարանում այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր սան կկարողանա գտնել սեփական եսը, իր դիմագիծը: Ուսանողությանը դիմելով՝ Հայր սուրբը շեշտեց, որ հոգեւորական դառնալու ձգտումը պատասխանատու գործ է եւ դրան պետք է մոտենալ կատարյալ լրջությամբ: Այնուհետեւ Հայր սուրբը ողջունեց հանդիսությանը ներկա գտնվող բարերարներին՝ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի նախագահԿարեն Մկրտչյանին եւ Հրաչյա Պողոսյանին, որոնք աջակցել են ճեմարանի ուսումնական մակարդակի բարձրացման շատ հարցերում եւ նշեց, որ այդ բարի եւ ուշադիր վերաբերմունքի համար մեծ է նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի ներդրումը: Իր խոսքի վերջում Հայր սուրբը դասախոսական կազմին մաղթեց քաջ առողջություն եւ կայունություն իրենց գործում եւ որդիական խոնարհությամբ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին հայրական խնամքի համար:

Հոգեշնորհ Հայր սուրբի ելույթից հետո ճեմարանի երգչախումբը գեղարվեստական ղեկավար տիար Շոթա Վարդանյանի առաջնորդությամբ կատարեց «Մուսալեռան կարոտը» երգը, որում մենակատարեցին Զ լսարանի սան բարեշնորհ Անդրանիկ սարկավագ Հովհաննիսյանն ու Դ լսարանի սան Արթուր դպիր Վարդանյանը:

Շնորհունակ ճեմարանական ուսանողներից Նորվան ուրարակիր Իսախանյանը հանրությանը մատուցեց Սիամանթոյի «Խոսք անծանոթ անցորդին» ստեղծագործությունը: Երաժշտության ծիրում հմուտ Արթուր դպիր Վարդանյանը կատարեց Է. Բաղդասարյանի «Պրելյուդ»-ը: Ասմունքով աչքի ընկնող մյուս սանը՝ Դավիթ դպիր Հովհաննիսյանը ներկայացրեց Ֆրիկի «Խրատ հոգեշահ»-ը: Երգչախումբը կատարեց Ճանիկյանի եւ Կոմիտաս վարդապետի «Հայրիկ, Հայրիկ» երգը: Իսկ Մարգար դպիր Հագելյանը գեղասահ ասմունքով ներկայացրեց Ե. Չարենցի «Էպիկական առավոտ» ստեղծա-

գործությունը: Իբրեւ հանդիսության գեղարվեստական մասի ավարտ երգչախումբը կատարեց Է. Հովհաննիսյանի եւ Պ. Սեւակի «Էրեբունի- Երեւան» երգը:

Հանդիսության պսակիչ եւ եզրափակող խոսքով ներկաներին դիմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկա գտնվող հոգեւորականներին եւ աշխարհական հյուրերին: Հայրապետը փառք մատուցեց Տիրոջն այն բանի համար, որ նոր ուսումնական տարում ճեմարանն ունի 120 սան, ինչը վկայում է այն մասին, որ կրկին սպասվում է առատ հունձք, եւ ապագայում կլինի հոգեւորականների եւ եկեղեցականների մի նոր սերունդ:

Վեհափառ Հայրապետը մեջբերեց ավետարանական այն հատվածը, ըստ որի աշակերտը չի կարող գերազանցել իր վարդապետին, իսկ հետո ավելացրեց ժողովրդական այն ասացվածքը, թե յուրաքանչյուր աշակերտ պետք է գերազանցի իր վարդապետին: Սրացված այս հակադրությանը Վեհափառը տվեց յուրահատուկ մեկնաբանություն: Ավետարանական հատվածի վարդապետը մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսն է. Նրան մենք չենք կարող գերազանցել, այլ՝ միայն նմանվել, իսկ ժողովրդական ասացվածքի հորդորով միանշանակ հնարավոր է առաջ ընթանալ գերազանցելու իմաստով, քանի որ դա յուրահատուկ նվիրական մի երեւույթ է, երբ աշակերտը հասնում է իր վարդապետին, քանզի դա մատնանշում է, որ վարդապետը գործել է ազնվաբար, իր աշակերտին ավանդելով այն ամենն ինչ ունեցել է: Վեհափառը հորդորեց բոլորին ձգտել նմանվել Քրիստոսին եւ հասնել ուսուցիչների մակարդակին:

Վեհափառը վերջում շեշտեց, որ շուտով կբացվեն հանդիսությունների սրահը, ընթերցասրահը եւ մարզադահլիճը: Դա հնարավորություն կտա ուսանողներին զարգանալ մտավոր եւ ֆիզիկական ուղիներով: Վեհափառն առանձնակի գոհունակությամբ նշեց, որ նոյեմբեր ամսին կկատարվի նոր մատուռի օծումը, որը նախատեսված է ճեմարանականների համար:

Հավարտ հանդիսության երգչախումբը կատարեց Կոմիտասի մշակած համերգային «Հայր մեր»-ը, ապա «հայրապետական մաղթանք»-ը եզրափակեց արարողությունը:

ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գեւորգյան հոգեւոր ճեմարան
Ջ լսարան

## ՃԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Բարեպաշտ բազմաթիվ հայորդիներ այսօր եւ անցյալում եղել են օտար երկրների հայտնի դեմքերից տարբեր ասպարեզներում եւ ուղղություններում, սակայն եղել են նաեւ ազգասեր հայեր, ապացուցել են, որ դրսում ապրելով չեն կորցրել իրենց ազգային դիմագիծն ու նվիրվածությունը: Որքան հաճելի եւ ուրախալի է իմանալ, որ մեր հայրենակիցներն օտար երկրներում հասել են մեծ հաջողությունների եւ իրենց ասպարեզում դարձել են անփոխարինելի մասնագետներ, եւ նրանց օգնությանը դիմում են մարդիկ, երբ չեն կարողանում գտնել ելք:

Վերոնշյալ բոլոր որակները համապատասխանում են հայազգի դոկտոր Վազրիկ Բազիլին, որ 2011 թ. սեպտեմբերի 16-ին Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանում դասախոսություն կարդաց«Նշան եւ հաղորդակցություն» խորագրով:

Մինչ հարգարժան հյուրը պատրաստվում էր սկսել իր ելույթը, ճեմարանի տեսուչ՝ հոգեշնորհ Տ. Գեւորգ վարդապետ Սարոյանը ներկաներին տեղեկացրեց, որ տիար Բազիլին վաղուց էր հրավեր ուղարկվել ճեմարանում դասախոսելու, սակայն վերջինս հետաձգել էր, պատճառաբանելով, որ ճեմարանի համար նա պետք է պատրաստվի ըստ արժանվույն, եւ ահա վերջապես այդ ժամանակն եկել էր:

Վազրիկ Բազիլի հետ ճեմարան ժամանած Նարեկ Մալյանը ներկայացրեց հարգարժան հյուրին: Տիար Մալյանի հաղորդմամբ՝ Վազրիկ Բազիլը արտասահմանում գտնվող հայերի մեծանուն ներկայացուցիչներից է, հռչակ է ձեռք բերել ոչ թե շռութիզնեսի կամ այլ լծակի շնորհիվ, այլ տքնաջան աշխատաքով: Նշվեց նաեւ, որտիար Բազիլի օգնությանը դիմել են արտասահմանի խոշոր քաղաքական գործիչները, սակայն վերջինիս վերաբերյալ հյուրը համեստաբար ոչ մի տեղեկություն չհայտնեց: Իսկ վերջերս տիար Բազիլը ընտրվել է գերմանախոս երկրների ճառագիրների միության նախագահ: Ելույթ ունենալու հրավիրվեց ինքը՝ Վազրիկ Բազիլը:

Հարգարժան դոկտորի ելույթը միանգամից գրավեց ներկաների ուշադրությունը, քանի որ վերջինս դասախոսությունը վարում էր ակտիվ քննարկման հոգով եւ հաջորդ պարբերակետին անցնելուց առաջ հնարավորություն էր տալիս ներկաներին հարցերով եւ առաջարկներով վերանայել նախորդ կետը:

Տիար Բազիլի խոսքերից պարզ դարձավ, որ նշան հասկացությունը ավելի բազմեզր ու բազմիմաստ է, քան կարող է թվալ առաջին հայացքից. այդ երեւույթի փոխանցումը ներառում է միանգամից երեք մաս՝ բուն նշանը, նշանի հաղորդողն ու նշանի ընկալողը: Այս գործողությունն իր հերթին կատարվում է չորս եղանակով. տեղեկատվության, համակրանքի կամ հակակրանքի, ինքնաբացահայտման եւ կոչման միջոցով: Սրանցից յուրաքնչյուրի ճիշտ համադրության եւ դասավորության պարագային կարելի է յուրաքանչյուր անհատի կամ խմբի հաղորդել այն ամենը, ինչ ցանականում է մարդ եւ դա կատարել այնպես, որ ընկալողը բաց չթողնի ոչ մի տարր:

Դասախոսության վերջում Վազրիկ Բազիլը մեծ գոհունակություն հայտնեց ներկաներին իր մատուցած նյութն ուշադիր ունկնդրելու համար, իսկ տեսչությանը նա շնորհակալություն հայտնեց պատեհ առիթ եւ հնարավորություն ընձեռելու համար:

Ճեմարանի տեսչությունն իր հերթին շնորհակալություն հայտնեց եւ շեշտեց, որ ստեղծված կապը կպահպանվի նաեւ հետագայում:

ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գեւորգյան հոգեւոր ճեմարան
Զ լսարան

## ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Արմավիրցի հավատացյալ ժողովուրդը արդեն երկար ժամանակ էրսպասում քաղաքում եկեղեցի ունենալու պատմական օրվան, որը ապրեց 2011 թվականի սեպտեմբերի 17-ին: Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի եւ Արմավիր քաղաքի 80-ամյակի նախաշեմինմարզկենտրոն Արմավիր քաղաքումհանդիսավորությամբ կատարվեցեկեղեցու հիմնարկեքի արարողությունը, որը ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարությունների շարքում իր կարեւորությունն ու խորհրդավորությունն ուներ:

Հիմնօրհնեքի արարողությանը ներկա էին Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, Արմավիրի քաղաքապետ Ռ. Խլղաթյանը,մարզի դատախազ Հ.Ղարախանյանը, պատվավոր հյուրեր,ովքեր

սպանձնեցին եկեղեցու 16 վեմ քարերի կնքահայրերի պարտականությունը: Իրենց աղոթքներն էին բերել և եկել էին այս պատմական իրադարձությանը մասնակցելու բազմաթիվ հավատացյալ հայորդիներ:

Տերունական աղոթքով Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանը սկսեց Արմավիր քաղաքում կառուցվող բազիլիկ եկեղեցու հիմնօրհնեքիարարողությունը: Ապա ընթերցվեցին Սուրբ գրային հատվածներ, որից հետ Սրբազան Հայրը եւթեմի հոգևոր դասը սաղմոսների ընթերցման ու շարականների երգեցողության ուղեկցությամբ նախ գինիով և ջրով լվացին16 քարերը, որոնք պետք է լինենեկեղեցու վեմերը և Սրբալույս Մյուռոնով Սրբազան Հայրը օծեց դրանք:

Բազիլիկ եկեղեցու ճարտարապետն է Միքայել Մկրտչյանը:

Քարերի օծման և տեղադրման հանդիսավոր արարողակարգից հետո ներկաներին իր սրտի խոսքն ասաց Տ. Սիոն եպս. Ադամյանը.

«Սեպտեմբերի 17-ն արմավիրցու համար իրապես պատմական օր է, օրհույսի և սրբազան ուխտի:80-ամյա պատմությունը կերտած քաղաքը ՀՀ անկախության 20-ամյակի տոնակատարությունների շեմին իր մասնակցությունն էբերում եկեղեցաշինության հիմնօրհնեքին, որն իսկական տոնէ հայ քրիստոնյայի համար, քանի որ վեր է խոյանալու Աստծո տաճար, որտեղ աղոթք է բարձրացվելու հայի շուրթերից՝ ազգի պահպանության և հաղթանակների համար: Եկեղեցուհիմնաքարերի օրհնությամբ և եկեղեցու կառուցմամբ բոլորիդ առջև բացվում են նոր հույսերի դռներ և ճշմարիտ կյանքի նոր ճանապարհ: Այս նվիրական գործը սկսելու համար նախ ապավինում ենք երկնային Տիրոջը և մեծագույն երախտագիտության և գոհության խոսքեր հղում բարերար Կարեն Մկրտչյանին, ում անձնվեր ու ներշնչյալ աշխատանքըպիտի ապահովի այս սուրբ գործի հաջողությունը»:

Կարեն Մկրտչյանըծնվել և մեծացել է Արմավիր քաղաքում, սակայն այժմ ապրում է Սանկտ Պետերբուրգում: Հանդիսանալով Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի նախագահը՝ իրնվիրականանաջակցությունն է բերումհայ եկեղեցու պայծառացմանը եւիր նպաստավոր գործունեությամբ Հայաստանից հեռու գտնվող հայ համայնքի համախմբվածության և բարօրության համար իր նվիրական ծառայությունը մատուցում:

Կարեն Մրտչյանին բարեմաղթության խոսքեր ասացին նաև Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, քաղաքապետ Ռ. Խլղաթյանը:

Բազմաթիվ շնորհավորանքներից բացի ՀՀ Սփյուռքի նախարարության ԱՊՀ երկրների վարչության պետ Անդրանիկ Արշակյանը ՀՀ Սփյուռքի նախարարության բարձրագույն պարգև՝ ոսկե մեդալ հանձնեց Կարեն Մկրտչյանին:

Արմավիրցիների համարբարերար Կարեն Մկրտչյանը կազմակերպել էր մեծտոնախմբություն, համերգային ծրագրի ժամանակ բոլորը պատիվ ունեցան ունկնդրելու Հայաստանի պետական կամերային երգչախմբի կատարումները՝ արվեստի վաստակավոր գործիչ Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ: Այնուհետև հյուրերը և ներկա հավատացյալներըճաշակեցին մատաղ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

## ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 16-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց ՀՀ Զինված ուժերի հոգեւոր առաջնորդության դրոշի օրհնության արարողությունը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ, ՀՀ պաշտպանության փոխնախարար Վլադիմիր Գասպարյանը, ՊՆ պաշտոնյաներ ու բարձրաստիճան զինվորականներ, ՀՀ ԶՈւ հոգեւոր սպասավորներ՝ գլխավորությամբ Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի, եւ ուխտավորներ:

Միածնաէջ Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առջեւ, մինչ արարողության սկսելը Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց ներկաներին՝ ուրախություն հայտնելով պատմական իրադարձության առիթով: «Մենք փառք ենք տալիս, որ դեռեւս 1997 թ. ստեղծված բանակի հոգեւոր սպասավորությունը տարիների ընթացքում ավելի զորացավ եւ բարձրացավ հոգեւոր առաջնորդության հանգամանքի: Այսօր այլեւս մեծ թվով հոգեւոր սպասավորներ իրենց ծառայությունն են բերում հայոց բանակում այն գիտակցությամբ, որ բանակը զորեղ է եւ հաղթական, եթե իր հոգում կրում է Աստծուն եւ իր ընթացքն առաջնորդում է Աստծով: Ահա թե ինչու այսօր նաեւ հայոց բանակի դրոշի վրա մենք կարդում ենք հետեւյալ արտահայտությունը՝ «Մեր ուղին օրհնյալ է, որովհետեւ Աստված մեզ հետ է»: Այսպես դարեր շարունակ ապրել է մեր ժողովուրդը, Աստծով կերտել իր բոլոր հաղթանակները, Աստծով հաղթահարել բոլոր փորձությունները», - նշեց Նորին Սրբությունը:

Խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրեց ներկաներին միասնական աղոթք բարձրացնել առ Աստված, որ Տերը զորեղ եւ անպարտելի պահի հայոց բանակը, անսասան՝ մեր հայրենի երկիրը, որպեսզի մեր ժողովուրդը, իր ընթացքը պահելով Տիրոջ ճանապարհների վրա, ապրի խաղաղության մեջ եւ հայոց անկախությունը լինի հավերժ ու հարատեւ:

Այնուհետեւ կատարվեց Դրոշի օրհնության կանոնը: Այս նույն կանոնով է օրհնվել նաեւ ի պաշտպանություն հայրենյաց մարտնչող հայ կամավորական ջոկատների դրոշը ԺԹ դարասկզբին:

Սաղմոսների, շարականների եւ աղոթքների ներքո Վեհափառ Հայրապետն օրհնեց նոր դրոշը, ապա հանձնեց հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը եւ ներկաները համբուրեցին սրբագործված դրոշը: Վերջում վերստին Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց ամենքին եւ Հայրապետական իր օրհնությունը փոխանցեց Հայոց բանակի հրամանատարներին եւ հոգեւոր սպասավորներին՝ մաղթելով. «Թող այս դրոշը հպարտորեն ծածանվի, եւ իր օրհնության ներքո պահի Հայոց բանակը եւ նրա քաջարի զինվորներին ու հրամանատարներին: Թող այս դրոշի ներքո զորանա նրանց ոգին, որպեսզի նրանք Աստծուն ապավինած շարունակեն իրենց ազգանվեր, հայրենասեր ծառայությունը Հայրենիքին եւ հայոց կյանքի պաշտպանության, որպեսզի մեր երկիրը մշտապես բարգավաճի ու զորանա»:

Ռռնաքարերով ու մարգարիտներով զարդարուն խաչով պսակված դրոշի մի երեսին խաչի ասեղնագործ պատկերն է՝ «ՀՀ, ԶՈՒ հոգեւոր առաջնորդություն» գրությամբ: Մյուս երեսին Զինված ուժերի զինանշանն է՝ «Օրհնյալ է մեր ուղին, զի Աստված ընդ մեզ է» գրությամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՆՏՎԵՐՊԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելգիայի Դաշնային Թագավորության Անտվերպենի համալսարանի պրոֆեսոր Լիլիան Վան Հոֆի գլխավորած ուսանողական խմբին, որի մեջ ընդգրկված երիտասարդները պատրաստում են իրենց մագիստրոսական թեզերը Հայաստանում կատարվող իրենց հետազոտությունների հիման վրա:

Հանդիպմանը Նորին Սրբությունը ողջունեց երիտասարդներին եւ, կարեւորելով նման ճանաչողական ձեռնարկները, հաջողություն մաղթեց նրանց օգտաշատ առաքելությանը: Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց պրոֆ. Վան Հոֆին արդեն ավանդույթի ուժ ստացած գեղեցիկ այս նախաձեռնության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունը համալսարանականներին ներկայացրեց նաեւ խորհրդային շրջանում Եկեղեցու առջեւ ծառացած դժվարությունները: «Ժողովրդի հոգու մեջ ապրող Եկեղեցին կյանք տվեց մեր խոնարհված ու փակված եկեղեցիներին», - նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում՝ գոհություն հայտնելով Աստծուն, որ զորեղ հավատքի զգացումը երբեք չի թողել մեր ժողովրդին, որի շնորհիվ անկախության քսան տարիների ընթացքում հոգեւոր կյանքում արձանագրվել են ակնառու եւ հուսադրող ձեռքբերումներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ ուսանողների հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին քրիստոնեական եկեղեցիների միջեւ առկա վարդապետական տարբերություններին, հարաբերություններին եւ համագործակցությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ<br>ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԵՐԹ ԴԵՊԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՈՒՆ

Սեպտեմբերի 17-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական կազմակերպությունը նախաձեռնել էր երիտասարդական ուխտերթ դեպի Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-ամյակի առիթով:

Ուխտերթի մասնակից շուրջ 3000 երիտասարդներ՝ Հայաստանի եւ Արցախի թեմական երիտասարդական միություններից եւ բուհերից, թմբուկների եւ փողհարների ուղեկցությամբ, ազգային երգերի կատարումներով, Ազատության հրապարակից խաչվառազարդ թափորով շարժվեցին դեպի Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի:

Մինչ արարողության սկսելը երիտասարդներին եկեղեցում ողջունեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, ապա հրավիրեց Վեհափառ Հայրապետին իր օրհնությունը բաշխելու այս առիթով Հայաստանի տարբեր շրջաններից ժամանած հազարավոր երիտասարդներին:

Տերունական աղոթքից հետո Նորին Սրբությունը եպիսկոպոսաց դասի առընթերակայությամբ օրհնեց եկեղեցասեր երիտասարդությանը, ապա Հայրապետական իր պատգամը հղեց ներկաներին:

Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքում մասնավորապես ասվում էր. «Սիրելի՛ զավակներ Մեր,

Ուրախություն է Մեզ համար այսօր ձեզ համախմբված տեսնել Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու նվիրական կամարների ներքո: Հայրապետական սիրով մեր օրհնություններն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ բոլորիդ եւ Մեր բարձր գնահատանքը՝ բարեպաշտ երիտասարդներիդ գովելի այս նախաձեռնությանը:

Հայաստանի Հանրապետության 20-ամյակի բերկրալի տոնին ընդառաջ, դուք, սիրելիներ, խանդավառությամբ աղոթքի եք ելել հանուն հայոց պետության զորացման՝ ձեր հոգում հնչեցնելով. «Օրհնեցե՛ք Տիրոջը, երիտասարդնե՛ր, օրհնեցե՛ք անունը Տիրոջ» աստվածաշնչյան պատգամը: Հավատքն առ Աստված, սերն առ ազգս հայոց եւ ծառայությունը Հայրենիքին ու Եկեղեցուն՝ այս է ուխտը մեր հայրերի, որ այսօր ձեզ հետ միասին պիտի նորոգենք այս սուրբ տաճարում: Այս ուխտով ու հավատո գործերով է, որ հայկական «փոքր ածուն» դիմագրավել է մարտահրավերներին ու արհավիրքներին ժամանակների, շենացրել է Հայրենին, վերահաստատել իր պետականությունը: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ամեն կարելիությամբ մշտապես սատարել է հայրենի պետությանը եւ անցած երկու տասնամյակներում, գտնվելով մեր անկախ պետականության վերահաստատման ու կայացման ակունքներում, զորակցել է նրա կերտմանն ու ամրապնդմանը:

Տոնական այս օրերին խնդությամբ է լցված համայն մեր ժողովրդի հոգին: Հայոց պետականության վերահաստատումը հարյուրամյակների մեր ազգային երազանքի լրումն էր: Պետության անկախության հիմքը ազատությունն է, որը, սիրելիներ, աստվածային բացառիկ շնորհ է: «Ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է» (Բ Կորնթ. 3.17),- ասում է առաքյալը, ազատություն չարիքից, կեղծիքից, անարդարությունից: Հոգեւոր այս ազատությունը կամրապնդի հիմքերը մեր պետության, կպաշտպանի եւ նպաստ կբերի հայրենի մեր երկրին: Մեր անկախության քսան տարիների ընթացքին արձանագրվել են բազմաթիվ ձեռքբերումներ, սակայն այսօր մեր երկիրը դիմագրավում է նաեւ դժվարին փորձությունների ու մարտահրավերների: Տակավին իրենց արդարացի լուծմանն են սպասում Արցախյան հիմնախնդիրը, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչումը: Հայրենական մեր կյանքում հաղթահարված չեն տնտեսական-սոցիալական դժվարությունները, մեր ժողովրդին տարանջատում են Հայաստանը քարոզչության համար խոպան տարածք նկատող կրոնական կազմակերպությունները:

Սիրելինե՛ր, այսօր մեր երկիրը կարիքն ունի իր սիրասուն զավակների հոգածության, որպեսզի շենանա, հզորանա եւ բարգավաճի: Յուրաքանչյուր առողջ հասարակության շարժիչ ուժը նաեւ երիտասարդությունն է՝ իր անսպառ աշխատասիրությամբ, մտքի թռիչքով, նախաձեռնությամբ, նվիրումով եւ լավատեսությամբ: Այսօրվա երիտասարդը մեր վաղվա պետական գործիչը, գիտնականը, մանկավարժը, բժիշկը, զինվորականն ու հոգեւորականն է, որոնց ձեռքերում են գտնվում դեռեւս երիտասարդ մեր Հայրենիքի վաղվա առաջընթացն ու նվաճումները: Մեր անկախությունը առավել արդյունավորելու համար անհրաժեշտ է մեր ժողովրդի ու նաեւ երիտասարդ մեր զավակների պատասխանատվության զգացումը Աստծո, հարազատ երկրի ու ժողովրդի առջեւ: Ուրախ եւ քաջալեր է Մեր հոգին, որ դուք այդ գիտակցությամբ եք այսօր միավորել ձեր աղոթքները: Մեր հավատարմությունը Հայրենիքին, մեր ազգային ինքնագիտակցությունն ու հոգեւոր անվտանգությունը երաշխավորված է Եկեղեցու շուրջ համախմբումով:

Սիրելի երիտասարդներ, դուք այսօր մասնակցեցիք ուխտի քայլերթի, որն ուղեկցվում էր հոգեւոր շարականների երգեցողությամբ: Այդ ճանապարհը, որ անցաք Ազատության հրապարակից մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, նման է մեր ժողովրդի պատմական ուղուն: Ազատության սերը հոգում մեր ժողովուրդը քայլեց դեպի եկեղեցի, իր աղոթքը բարձրացրեց առ Աստված եւ Բարձրյալի ողորմությամբ վերահաստատեց հայրենի անկախ պետականությունը եւ նրա հովանու ներքո հոգեւոր իր կյանքը պայծառացրեց:

«Օրհնեցէ՛ք Տիրոջը, երիտասարդնե՛ր, օրհնեցէ՛ք անունը Տիրոջ»: Թող սաղմոսի այս կոչը արձագանքի ձեզանում, որպեսզի աստվածսիրությամբ նաեւ հաստատուն լինեք բարեպաշտության, ազգասիրության ու հայրենասիրության մեջ: Սիրելի զավակներ Մեր, Հայոց Հայրապետիս հորդորն ու պատգամն է ձեզ, որ անշեջ պահեք հավատքը եւ անսասան՝ հայրենասիրությունը ձեր հոգիներում, լինեք առաքյալներ հայության մեջ՝ ձեր ոգեշունչ, ազգօգուտ գործունեությամբ խնամելով երկիր հայրենին, հավելելով սերն ու համերաշխությունը համազգային կյանքում: Ապրեք այնպես, որ մեր ժողովուրդը միշտ հպարտ լինի ձեզանով, եւ ձեր աշխատասիրությունը, հայրենանվեր ընթացքը եւ հավատքի բեղուն գործերը լուսառատ նոր հորիզոններ բացեն գալիք սերունդների համար»:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը շնորհավորեց Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա պարեդարձի առիթով՝ մաղթելով, որ Երկնավոր Տերը զորություն ու շենություն շնորհի մեր հայրենի անկախ երկրին, բարօրություն ու առաջընթաց՝ աշխարհասփյուռ հայ ժողովրդին:

Արարողությունից հետո Մայր եկեղեցու բակում տեղի ունեցավ համերգ-պոռնախմբություն:

Համերգի ընթացքում կատարումներով հանդես եկավ ՀՀ Ոստիկանության ներքին զորքերի փողային նվագախումբը, հոգեւոր ու ազգային երգեր ներկայացրեցին Արարատյան Հայրապետական թեմի «Արարատ» միության երգչախումբը, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանողները, եւ ելույթ ունեցան մի շարք պարային համույթներ:

Արարողությանը ներկա էին ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության աշխատակիցներ, ՀՀ պետական եւ մասնավոր բուհերի ռեկտորներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ<br>ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի եւ Հայաստանի Մխիթարյան վարժարանների սաներին՝ ուղեկցությամբ Հայաստանի Մխիթարյան վարժարանի տնօրեն Հ. Սերովբե վարդապետ Չամբուրյանի:

Հանդիպման այս առիթն ընձեռելու եւ ջերմ ընդունելության համար Հայր Սուրբը սաների անունից իր շնորհակալական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին:

«Դյուրին չէ հոգեւոր-կրոնական հաստատության մեջ ուսանելը, շատ զոհողություններ են պահանջվում անձից, ուստի անհրաժեշտ է, որ դուք հիմա ձեր անձը լավ կրթեք, լավ դաստիարակեք, որպեսզի պատրաստ լինեք ապագա ծառայությանը», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով սաներին լավ սովորել եւ արժանավոր զավակներ դառնալ հայոց ազգի եւ Հայրենիքի համար:

Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորապես պատգամեց պատանիներին լավ սերտել մայրենի լեզուն՝ նշելով, որ լեզուն բանալին է հայի ինքնության, եւ որի շնորհիվ է միայն հնարավոր հայոց պատմության ու մեր հայրերի թողած ժառանգությանյուրացումը, նրանց արժեքներով կրթվելն ու դաստիարակվելը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը հայրական իր օրհնությունը բերեց վարժարանների սաներին, ինչպես նաեւ իր գնահատանքի խոսքը՝ Հայր Սերովբեին իր նվիրյալ ծառայության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տնտեսական եւ սոցիալական խորհրդի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի եւ խորհրդի անդամների:

Հանդիպմանը փիար Վ. Մանուկյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց պատվիրակության այցի նպատակը՝ կարեւորելով համագործակցության համաձայնագրի կնքումը Հայաստանի Հանրային խորհրդի եւ Չինաստանի Տնտեսական եւ սոցիալական խորհրդի միջեւ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց, որ Հայաստանի եւ Չինաստանի միջեւ հարաբերությունները առաջընթաց են ապրում եւ սերտանում են ինչպես պետական փոխայցելություններով, նույնպես եւ հանրային, մշակութային ու տնտեսական զանազան կառույցների համագործակցությամբ: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ երկու խորհուրդների միջեւ սկզբնավորվող համագործակցությունը եւս կարեւոր նպաստ կբերի երկու ժողովուրդների բարօրությանը եւ, ողջունելով նախաձեռնությունը, հաջողություն մաղթեց ներկաներին հետագահամատեղ աշխատանքներում:

Իր հերթին Չինաստանի տնտեսական եւ սոցիալական խորհրդի նախագահի տեղակալ Անջիանգ Ցանգը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար, ներկայացրեց խորհրդի գործունեությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՊՈԼՍԻ «ԴԱԼԱՐ» ԵՐԳԻ ՈՒ ՊԱՐԻ ԽՄԲԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Պոլսահայ համայնքի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Պոլսից Հայաստան ժամանած Մխիթարյան սանուց միության «Դալար» երգի ու պարի խմբի անդամներին:

Մխիթարյան սանուց միության անդամներից Դիանա Գամբարոսյանը Վեհափառ Հայրապե-

տին ներկայացրեց երգի ու պարի խումբը եւ Հայաստանում գտնվելու ծրագիրը, իսկ խմբի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Ջուլիա Մութլուն անդրադարձավ խմբի ստեղծմանը եւ ներկայիս գործունեությանը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը ողջունեց պարախմբի առաջին այցը Հայրենիք՝ ուրախություն հայտնելով, որ առիթը պիտի ունենան մասնակից դառնալու նաեւ Հայրենիքի անկախության 20-ամյակին նվիրված փառախմբություններին:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց խմբի անդամներին՝ պոլսահայության համայնքային կյանքում աշխուժություն մտցնելու եւ ազգային ավանդույթները նախանձախնդրորեն պահպանելու համար՝ հորդորելով նրանց շարունակել ապրել պոլսահայերին բնորոշ աստվածսիրության եւ ազգայնասիրության ոգով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ այս խմբի օրինակը կխանդավառի նաեւ Սփյուռքի այլ հայորդիներին՝ ամուր եւ անսասան պահելու ազգային մեր ավանդները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 18-ի երեկոյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, որ ժամանել է Հայաստան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ մասնակցելու ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումներին:

Օդանավակայանում Արամ Ա Կաթողիկոսին դիմավորեցին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից՝ Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանյանը, ինչպես նաեւ Մայր Աթոռի միաբաններ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Տ. Արշակ եպիսկոպոս Տիգրանյանը, Տ. Մուշեղ վարդապետ Բաբայանը եւ Տ. Միխթար աբեղա Գրիգորյանը:

Միածնաէջ տաճարի զանգերի ղողանջների ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը Վեհարանից առաջնորդվեցին Մայր Տաճար, ուր Իջման Սուրբ սեղանի առջեւ կատարվեց գոհաբանական աղոթք:

Ապա Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը բարիգալստյան խոսքով դիմեց Արամ Ա Կաթողիկոսին եւ ուղեկից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբանության անդամներին. «Գեղեցիկ է Ձեր այցելության առիթը. եկել եք մասնակցություն բերելու Հայաստանի Հանրապետության 20-ամյա տարեդարձի հանդիսություններին: Այս առիթով մենք ձեզ հետ միասին պիտի մասնակցություն բերենք ծրագրված միջոցառումներին եւ մեր խոսքն ու պատգամը փոխանցենք հավատավոր մեր զավակներին՝ գոտեպնդելով նրանց իրենց առ հայրենին սիրո մեջ եւ հորդորելով նրանց, որ շարունակեն նույն նվիրումով ու հանձնառությամբ իրենց ծառայությունը բերել ի շինություն, ի պայծառություն եւ ի բարօրություն մեր ժողովրդի»: Անդրադառնալով Հայրենիքի անկախությանը՝ Նորին Սրբությունը մասնավորաբար նշեց. «Մեր Եկեղեցին դարերի մեջ միշտ էլ սնուցել է ազատության ոգին ու գաղափարը մեր զավակներին, վառ է պահել նրանց հոգիներում հայոց պետականության ձգտումը, եւ փառք ենք տալիս Աստծուն, որ այսօր այն իրականություն է դարձել եւ, որ մեր Եկեղեցին կանգնած

է այս ձեռքբերումների ակունքներում: Այսօր մենք ձեզ հետ միասին մեր ներկայությամբ վկայություն ենք բերելու, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին շարունակելու է իր զորակցությունն իր հայրենի պետությանը իր բարի իրագործումներում հայրենի մեր ժողովրդի համար, ինչպես եւ աշխարհասփյուռ մեր զավակների համար օրինյալ, ապրվածահաճո, բարօր կյանքի կերտման աշխատանքներում»:

Խոսքի վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերը քաջառողջ պահի Արամ Ա Հայրապետին եւ բեղմնավոր դարձնի նրա բոլոր ջանքերն ի պայծառություն եւ ի շինություն ազգային մեր կյանքի եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցի եւ հանդիպման առիթով իր զգացումներն արտահայտեց նաեւ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը: «Ամեն անգամ, որ գտնվում եմ հայրենի հողի վրա, Սուրբ Էջմիածնի խորհուրդի մեջ, ոչ միայն հայոց պատմությունն եմ ապրում, այլ նաեւ իմ քրիստոնեական հավատքի մեջ, ազգային ապրումներիս մեջ վերանորոգվում եմ: Այսպես պիտի լինի յուրաքանչյուր հայ, մանավանդ Հայ Եկեղեցու հոգեւոր ծառայությանը նվիրված հոգեւորականը», - նշեց Արամ Ա կաթողիկոսը: Անդրադառնալով ՀՀ անկախության 20-ամյակին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն ընդգծեց, որ Հայ Եկեղեցին իր գործուն եւ հանձնառու մասնակցությունն է բերել Հայաստանի անկախության կերտմանը, Հայաստանի անկախության ամրապնդմանն ու հայ ժողովրդի բարօրությանը: «Մենք երբեք կրավորական, հետեւողի վիճակի մեջ չենք եղել, մեր կյանքի լուսանցքի մեջ չենք եղել, այլ մեր ժողովրդի ու մեր Հայրենիքի կյանքի մայր էջի վրա մեր Եկեղեցին մնաց, գործեց ու ծառայեց: Մեր Եկեղեցին ծառայեց բարձրագույն աստիճանի նվիրվածությամբ, խոր հավատքով եւ ամբողջական հանձնառությամբ: Ահավասիկ այսօր մենք պիտի վերանորոգենք այս առիթով Հայաստանի՝ մեր բոլորի Հայրենիքի հզորացման, մեր Եկեղեցու պայծառացման գործում մասնակցությունը»:

Արամ Ա Հայրապետը մաղթեց, որ Աստված շեն պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ հաջողություն պարգեւելով եկեղեցաշեն ծրագրերին, եւ ավելի պայծառացնի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Բարիգալստյան արարողությունն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ ու միասնական պերունական աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԺՈՂՈՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԲԱԳԱԼՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Սեպտեմբերի 18-23-ը, Հնդկաստանի Բագալոր քաղաքում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի եւ Վատիկանի համատեղ հանձնախմբերի հանդիպումը՝ «Աղոթքի շաբաթ հանուն քրիստոնեական միության» 2013 թվականի վերջնական տեքստը պատրաստելու նպատակով:

Այդ տեքստն այս տարի պատրաստել էին Հնդկաստանի ուսանողների քրիստոնեական շարժման անդամները՝ հիմնվելով Հնդկաստանում այսօր տիրող քաղաքական, ընկերային եւ կրոնական իրավիճակի վրա: Քննարկումների արդյունքում աշխատանքային խմբին հաջողվել է պատրաստել «Աղոթքի շաբաթ հանուն քրիստոնեական միության» 2013 թվականի վերջնական տեքստը, որը առաջիկային կփոխանցվի ամբողջ աշխարհի քրիստոնեական համայնքներին:

Որպես Հայ Եկեղեցու ներկայացուցիչ ժողովին մասնակցեց տիկին Անի Ղազարյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## «ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» ԿՈՆՖԵՐԱՆՍ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 19-ին, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում տեղի ունեցավ «Կրոնական համայնքների եւ քաղաքացիական հասարակությունների դերն ու պատասխանատվությունը Հարավային Կովկասում կոնֆլիկտների լուծման գործում» խորագրով կոնֆերանս՝ մասնակցությամբ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների: Միջոցառման կազմակերպիչն էր Ավստրիայի Կառավարության Եվրոպական եւ միջազգային գործերի նախարարությունը:

Խորհրդաժողովին մասնակցեցին Ավստրիայում Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանները, Հայաստանում եւ Վրաստանում Ավստրիայի արտակարգ եւ լիազոր դեսպանը, Հարավային Կովկասում Եվրամիության նախկին ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից կոնֆերանսին մասնակցեցին Կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Տ. Խորեն քահանա Կիրակոսյանը եւ Հայաստանյան Կլոր սեղան բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը:

Կոնֆերանսի ընթացքին կարդացվեցին զեկուցումներ եւ կազմակերպվեցին քննարկումներ Հարավային Կովկասում խաղաղության ու կայունության հաստատման վերաբերյալ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

Սեպտեմբերի 20-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ, եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի տեղի ունեցավ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական նոր մասնաշենքի բացումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հանդիսապետությամբ նախ կատարվեց նորակառույց մասնաշենքի օրհնության արարողությունը, ապա Մատենադարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն, որի ընթացքում համայն հայության համար առանձնահատուկ կարեւորություն ներկայացնող այս իրադարձության կապակցությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքն ուղղեց ներկաներին.

«Այսօր առ Աստված աղոթքներով եւ օրհնությամբ կատարեցինք Մատենադարանի նոր մասնաշենքի բացման արարողությունը՝ հայց բարձրացնելով գիտության այս կաճառի առաքելության մշտանորոգ արգասավորման համար: Հայաստանի Հանրապետության նախագահի բարձր հովանու

ներքո եւ աջակցությամբ, ազնիվ բարերարների գովարժան նվիրատվություններով կառուցված այս հոյակերտ շինությունը՝ հագեցած նորագույն սարքավորումներով եւ արդիական ցուցասրահներով, մեծապես պիտի նպաստի գիտահետազոտական կենտրոնի նոր հաջողությունների ամրագրմանը, Մատենադարանում պահվող տասնյակ հազարավոր ձեռագիր մատյանների, հնատիպ գրականության ու վավերագրերի բարվոք պահպանմանը, վերականգնմանը, ուսումնասիրմանն ու հրատարակմանը, ինչպես նաեւ ձեռագրագիտության ու հայագիտության զարգացմանը, գիտնականների նոր սերնդի կրթությանը: Ուրախալի է, որ նոր նվիրաբերումներով եւ Մատենադարանի ջանքերով առավել հարստացած ձեռագիր արժեքները ավելի լայն հնարավորություններով պիտի ներկայացնեն հայոց դպրության փառքը այս նվիրական հաստատության այցելուներին:

Հավատավոր մեր ժողովրդի համար միշտ էլ սրբազան մասունքներ են եղել Մատենադարանի գանձերը, մեր ձեռագիր մատյանները, որոնք արտացոլում են լույսը երանյալ մեր հայրերի հավատքի, ոգին հայոց աստվածսիրության, ազգանվիրումի ու հայրենանվիրումի: Նախնյաց անգին ժառանգությունն ու հայոց փառահեղ պատմությունն են սերունդներին փոխանցել գրական մեր գոհարները, որոնք դարեր շարունակ կերտվել ու ընդօրինակվել են մեր վանքերի, գրչության կենտրոնների խնկաբույր հարկի ներքո՝ սահակ-մեսրոպյան ավանդույթները կրող վարդապետների ու գրիչների կողմից, նկարազարդվել վառ պատկերներով հանճարեղ ծաղկողների: Օրհասական պահերին մեր ձեռագրերը պաշտպանվել են մեր ժողովրդի զավակների անձնազոհության հերոսական դրսեւորումներով՝ կրելով կնիքը պայքարի ու մաքառումների:

Սիրելիներ, խորհրդանշական է, որ Մատենադարանի նորակառույց այս շենքի բացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումների շրջանակներում, քանզի ձեռագիր մեր մատյանները կրթել եւ հաստատել են հայոց հոգիներում նաեւ տենչը ազատության ու արդարության, զորացրել հայրենի երկրի պետականությունը վերահաստատելու վճռականությունը, որով երկու տասնամյակներ առաջ համազգային ջանքերով ծնունդ առավ Հայաստանի անկախ Հանրապետությունը: Մատենադարանի այս նոր մասնաշենքը նույնպես մեր անկախ պետականության ձեռքբերումներից է, որը զորացնելով Մատենադարանի առաքելությունը պիտի շարունակի արդյունավորել մեր կյանքը աստվածսիրությամբ ու հայրենասիրությամբ, նվիրումով, անխոնջ ջանքերով՝ ի սեր մեր Հայրենիքի եւ համայն աշխարհասփյուռ հայության:

Մեր սրտագին շնորհավորանքներն ենք բերում ամենքիդ, Հայրապետական Մեր գնահատանքը հայտնում հայրենի իշխանություններին, Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանին՝ Մատենադարանի հանդեպ հոգատարության համար: Մեր գնահատանքն ենք բերում նաեւ այս նորակառույցի հովանավորությունը ստանձնած բարերարներին, ճարտարապետին եւ բոլոր այն անձանց, որոնց ջանքերով հնարավոր եղավ իրականացնել Մատենադարանի նոր մասնաշենքի կառուցումը:

Թող Աստված Իր օրհնության ներքո պահի ու պահպանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, արգասավորի այս հաստատության նվիրական կամարների ներքո աշխատող գիտության մշակների վաստակը եւ բազում հաջողություններ պարգեւի հայանպաստ, արդար ու աստվածահաճո բոլոր գործերին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Անկախության 20-ամյակի առիթով, Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում տեղի ունեցավ Հանրապետական մաղթանք:

Եկեղեցականների թափորի ուղեկցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ու ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը մուտք գործեցին տաճար եւ իրենց խոնարհումը բերեցին ամպհովանու ներքո ամփոփված Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը պասներկու եպիսկոպոսների ուղեկցությամբ բարձրացան Սուրբ Խորան եւ կատարեցին գոհաբանական մաղթանք:

Արարողության ընթացքին սուրբգրային ընթերցումներից հետո Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը եւ Արամ Ա Կաթողիկոսը ծնրադիր ընթերցեցին Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի գրած «Գոհանամք զքէն» աղոթքը՝ հայցելով Աստծուց անսասանություն, պայծառություն ու բարօրություն Հայաստանի Հանրապետության եւ համայն հայոց ազգի համար: Այնուհետեւ եկեղեցական դասը օրհնությամբ մաղթեց, որ Աստված իր Ամենախնամ Ս. Աջի հովանու ներքո պահի ու պահպանի Հայաստանի Հանրապետությունը:

Տոնի առիթով կատարված հանդիսավոր արարողության ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իրենց օրհնությունն ու պատգամը բերեցին համայն հայ ժողովրդին:

Հանրապետական մաղթանքին ներկա էին նաեւ ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ տիար Տիգրան Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, բարձրաստիճան պետական այրեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբաններ, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ եւ հասարակական գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԺՈՂՈՎ ՊՐԱՀԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 21-24-ը Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահայում տեղի ունեցավ Եկեղեցիների եւրոպական խորհրդի Կենտրոնական կոմիտեի ժողով:

Ժողովին քննարկվեցին ԵԵԽ-ի ապագա գլխավոր քարտուղարի ընտրությանը եւ 2013-ին Բուդապեշտում կայանալիք ԵԵԽ համաժողովի կազմակերպմանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ խորհրդի անդամ եկեղեցիների ներկայացուցիչներին ներկայացվեց ԵԵԽ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

ԵԵԽ կենտրոնական կոմիտեի անդամները նաեւ հանդիպում ունեցան Չեխիայի Հանրապետությունում գործող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվեցին եւրոպական երկրներում քրիստոնեական եկեղեցիների առջեւ ծառացած մարտահ-

բավերները դիմագրավելու ուղղությամբ համատեղ առաքելություն իրականացնելու վերաբերյալ մի շարք խնդիրներ:

ԵԵԽ Կենտրոնական կոմիտեի ժողովին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Գարեգին աբեղա Համբարձումյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԲԸՄ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 22-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Արգենտինայի Բուենոս Այրեսի մասնաճյուղի տիկնանց հանձնախմբի ուխտավորներին՝ գլխավորությամբ Դիանա Սարաֆյանի:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով ուխտավորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց նրանց: «Հայրենիքի նկատմամբ ունեցած սերն է ձեզ առաջնորդել Հայաստան, եւ այնպիսի նվիրական օրերին եք գտնվում Հայրենիքում, երբ մեր ժողովուրդը տոնախմբում է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակը: Այդ պարեղարձը նաեւ ձերն է ոչ միայն այն պատճառով, որ հայ ժողովրդի զավակ եք, այլ նաեւ որովհետեւ այդ անկախությունը կերտվել է ձեր իսկ ջանքերով, ձեր իսկ բերած աշխատանքով ու աջակցությամբ», - իր խոսքում նշեց Նորին Սրբությունը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ նաեւ ՀԲԸՄ կարեւոր զորակցությանը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու սրբազան առաքելությանը:

ՀԲԸՄ Կենտրոնական վարչության պատվավոր անդամ Հարություն Սարաֆյանն ուխտավորների անունից իր շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ հայության հոգեւոր կենտրոնում ցուցաբերած ջերմ ընդունելության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ» ՀԱՄԱԽՄԲՄԱՆԸ

Սեպտեմբերի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Սուրբ Էջմիածնի երիտասարդներ» համախմբման շուրջ ութսուն անդամների Միությունը, որը ստեղծվել է 2010-ին Մայր Աթոռի միաբան Տ. Թովմա աբեղա Խաչատրյանի նախաձեռնությամբ:

Հանդիպմանը միության ղեկավար Հայր Թովման երիտասարդների անունից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ երիտասարդներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալե-

լու եւ հանդիպման հնարավորություն ընձեռելու համար, ապա ներկայացրեց միության կառուցվածքը, գործառույթները եւ իրականացրած գործունեությունը: Հայր Սուրբը տեղեկացրեց, որ ներկայումս համախմբմանն անդամակցում են 10-11 ուսումնական հաստատությունների շուրջ 150 ուսանողներ: Նրանք ամսական ժողովներ են գումարում եւ քննարկում ապագայում իրականացվելիք ծրագրերը: Դեպի Հայաստանի տարբեր շրջանների եկեղեցիներ հաճախակի ուխտագնացություններ կազմակերպելուց բացի միության անդամները Մայր Աթոռի միաբան սարկավագների առաջնորդությամբ ամեն շաբաթ այցելում են «Ջատիկ» մանկատուն:

Երիտասարդների հետ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ Հայր Սուրբի առաջնորդությամբ «Սուրբ Էջմիածնի երիտասարդները» կարեւոր ծրագրեր են իրականացնում Հայաստանի տարբեր շրջաններում: Խոսքն ուղղելով միության անդամներին՝ Նորին Սրբությունը մասնավորապես նշեց. «Յուրաքանչյուր երիտասարդի համար, իրապես,պատվաբեր է Էջմիածնի երիտասարդական կազմակերպության անդամ լինելը եւ էջմիածին անունը կրելը, բայց միեւնույն ժամանակ՝ պարտավորեցնող. դա նշանակում է, որ դուք կրողն եք էջմիածնի ամբողջ ժառանգության եւ պետք է մեծ նախանձախնդրություն դրսեւորեք այդ ժառանգության անաղարտ պահպանման համար»: Վեհափառ Հայրապետը, կարեւորելով կրոնաեկեղեցական գիտելիքների իմացությունը երիտասարդների համար, ընդգծեց, որ իրենց եռանդի, նախանձախնդրության եւ ստեղծագործական կարողությունների շնորհիվ երիտասարդները կարող են գործուն մասնակցություն ունենալ եկեղեցու առաքելության իրականացման մեջ:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Հայր Թովմային եւ համախմբման անդամներին՝ միության աշխատանքները հետեւողականորեն իրականացնելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՒ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՀՈԳԵՒՈՐ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻՋԵՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ եւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ.Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի աջակցությամբ համագործակցության հիմքդրվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սանկտ-Պետերբուրգի Ս.Ալեքսանդր Նեւսկու անվան Ուղղափառ հոգեւոր ակադեմիայի միջեւ:

Սեպտեմբերի 25-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ.Գեւորգ վարդապետ Սարոյանի եւ Ռուս Ուղղափառ հոգեւոր ակադեմիայի ռեկտոր Ամվրոսիյ եպիսկոպոս Գապչինսկու կողմից երկուհաստատությունների միջեւ միջբուհական համագործակցության մասին փաստաթուղթ ստորագրվեց: Սանկտ-Պետերբուրգ կատարած այցի ընթացքում Տ.Գեւորգ վարդապետ Սարոյանը մասնակցեց նաեւՌուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր ակադեմիայի նորոգված գրադարանի բացման արարողությանը, որը նվիրված էր երկու կրթական հաստատությունների բարեկամությանը:Գրադարանի նորոգությունը կատարվել էրՍանկտ-Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչ Հրաչյա Պողոսյանի օգնությամբ: Մեկ տարի առաջ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում Հրաչյա Պողոսյանի բարերարությամբ սկսեց գործել ռուսերեն լեզվի կատարելագործման լսարանը:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ կնքվում է համաձայնագիր երկու կրթօջախների միջեւ համագործակցության լայն շրջանակներով:Համաձայնագիրը վերաբերում է կրթական, գիտական, հրապարակչական, մեթոդական ծրագրերի զարգացմանը: Տեղի կունենան նաեւ ուսանողների եւ դասախոսների փոխանակումներ, գիտատեխնիկական նոր ուսումնական մեթոդների ներդրումներ:

«Այս համագործակցությունը խոսում է մեր երկու Եկեղեցիների միջեւ բարեկամական կապի մասին, որն առավել սերտ ու ջերմ հարաբերությունների առիթ կտա: Պետերբուրգի համայնքը դեռեւսՏ. Եզրաս արեղա Ներսիսյանի հովվության պարիներից սկսածհոգածու ուշադրությամբ է վերաբերվել Հայ Եկեղեցու հոգեւոր կրթօջախների գործունեությանըեւ մշտապես աջակցություն ցուցաբերելհոգեւորականների պատրաստման գործընթացին: Այս գեղեցիկ ավանդության շարունակությունը դարձավ համաձայնագրի ստորագումը:

Համագործակցությունը նաեւ միմյանց խորապես ճանաչելու հնարավորություն է տալիս: Ոչ միայն մեր սաները կուսանեն Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր կրթարաններում, այլ նաեւ նրանք կգան մեզ մոտ ուսանելու», -բարձր գնահատելով համաձայնության ձեռքբերումը` ասացՏ.Գեւորգ վարդապետ Սարոյանը:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ՀՀ-ՈՒՄ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

2011 թվականի սեպտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետությունում Հընդ-կաստանիՀանրապետության արտակարգ եւ լիազորդեսպան Նորին գերազան-ցություն Աջալ Կումար Մալհոթրան առաջին անգամ այցելեց Կալկաթայում (Հընդ-կաստան) Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող 190-ամյա Հայոց մարդասի-րական ճեմարան, որը առհավատչյանէ հայ-հնդկական դարավոր բարեկամութ-յան:

Հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն վարդապետ Հովհաննիսյանը ուրախությամբ ընդունեց բարձրաստիճան հյուրին, որի հետ հանդիպումը անցավ ջերմ մթնոլորտում:

Ի պատիվ մեծարգո հյուրի ճեմարանում կազմակերպվել էր մշակութային ձեռ-նարկ: Ճեմարանի երգչախումբը հնչեցրեցերկու երկրների օրհներգերը, այնու-հետեւ կատարեց հայ եւ հնդիկ նշանավոր կոմպոզիտորների հայտնի երգեր, իսկ պարախումբը ներկայացրեց հնդկական ժողովրդական պար: Համերգային ծրագրից հետո ցուցադրվեց «Հայերը Հնդկաստանում» տեսանյութը:

Իր բարիգալստյան խոսքում Հայր Խորենը խոսեց հայ-հնդկական վաղեմի բարեկամության մասին եւ եզրափակեց իր խոսքը ի մասնավորի ասելով` «Ձերդ գերազանցություն, ամեն կիրակի եկեղեցու զանգերի ղողանջի ներքո մենք պա-տարագ ենք մատուցում ի փառս Աստծո եւ աղոթում Հայաստանի եւ Հնդկաստանի խաղաղության եւ բարգավաճման համար: Թ-ող Ամենազորը անխախտ պահի մեր ժողովուրդների դարավոր բարեկամությունը»: Այնուհետեւ Հայր Սուրբը համայնքի եւ Մարդասիրականի անունից հնդկական հյուրամեծար ավանդույթի համաձայն մեծարգո դեսպանին նվիրեց մի շալ` ի նշան հարգանքի, սիրո եւ ջերմության:

Ձեռնարկն ավարտվեց պատվարժան Աջալ Կումար Մալհոթրայի ոգեշունչ ելույթով, որն իր

խոսքում նշեց, որ Հայոց մարդասիրական ճեմարանը շատ կա-րեւոր մի կառույց է, այն նշանակալից դերակատարություն ունի եւ բոլոր պեսան-կյուններից կամուրջ է հանդիսանում երկու մշակույթների միջեւ: Նա հորդորեց ա-շակերտներին կրթվել եւ դառնալ միջազգային հանրության քաղաքացիներ՝ չկորց-նելով իրենց հայկական ինքնությունը եւ ամուր կառչել երկու հնագույն քաղաքա-կրթությունների բարեկամության հենքից:

Հանդիպմանը ներկա էին Եկեղեցու վարչության ավագ անդամ տիկին Սյուզան Ռուբենը, Մարդասիրականի ուսուցիչները, սաները, աշխատակիցները:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

## ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Հայաստանի եւ Արցախի թեմակալ առաջնորդների ժողով:

Ժողովին քննության առնվեցին եկեղեցու առաջ ծառացած ժամանակակից մարտահրավերներ, թեմական կյանքին առնչվող վարչական, կարգապահական խնդիրներ: Քննարկումների ընթացքում մասնավորապես անդրադարձ կատարվեց թեմերում եկեղեցականների հովվական ծառայությանը: Կարեւոր նկատվեց, որ հոգեւոր հովիվները առավել ուշադրություն դարձնեն քարոզչական գործունեությանը, հովիվ եւ համայնք, հովիվ եւ ընտանիք հարաբերությունների սերտացմանը: Մտահոգություն հայտնելով Հայաստանում կրոնական տարբեր կազմակերպությունների եւ աղանդավորական հոսանքների քայքայիչ գործունեության հետեւանքով հասարակական կյանքում տեղ գտնող երեւույթների առիթով՝ ժողովականներն ընդգծեցին տուժած ընտանիքների եւ անհատների հետ առավել ակտիվ հովվական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը: Կարեւորվեց նաեւ հոգեւոր հովիվների բնակությունն իրենց խնամքին հանձնված համայնքներում: Այս առնչությամբ, քննության առնելով առանձին պարագաներ, որոշվեց, որ որեւիցե բացառություն չպետք է լինի:

Ժողովի ընթացքում նաեւ անդրադարձ կատարվեց վանքերի եւ եկեղեցիների պահպանման եւ հոգատարության խնդիրներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորն էր թեմակալներին՝ մասնավոր ուշադրություն դարձնել սրբավայրերի վերանորոգման եւ վերակառուցման աշխատանքներին, որպեսզի որեւէ կերպ չաղճատվի դրանց պատմական դիմագիծը:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը բերեց թեմակալ առաջնորդներին՝ գնահատանք հայտնելով թեմերում հոգեւոր սպասավորների կողմից իրականացվող նվիրյալ ծառայության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻԴՆԵՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 27-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիդնեյի (Ավստրալիա) Համազգային «Արշակ եւ Սոֆի Գալստյան» ճեմարանիսաներին եւիր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց նրանց: Համազգայինի 10-րդ եւ 11-րդ դասարանների 35 սաները հայրենիք են այցելել ճեմարանի 25-ամյակի առիթով:

Վեհափառ Հայրապետը ողջունելի եւ գովելի նկատեց ձեւավորված այն ավանդույթը, որ դպրոցի սաներն այցելում են Հայաստան: «Վստահ եմ, որ ձեր այս այցելությունն իր դրոշմը պիտի թողնի ձեր հոգիներում, եւ դուք, առավել զորացած հայկական զգացումների մեջ, հպարտ ձեր ազգային ինքնությամբ՝ պիտի վերադառնաք առավել նախանձախնդրորեն ձեր ուսումը շարունակելու, արժեքավոր զավակներ լինելու եւ ձեր կարեւոր մասնակցությունը բերելու հայ կյանքի առաջընթացին», - իր խոսքում նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը հորդորեց երիտասարդներին ամուր եւ հաստատուն պահել սերը Հայոց Եկեղեցու եւ հայ ինքնության նկատմամբ, ծառայություններ ստանձնել հայ կյանքից ներս՝ դրսեւորելով ստեղծագործական ոգի եւ նախանձախնդրություն:

Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց նաեւ Համազգային ճեմարանի մանկավարժներին եւ տնօրինությանը, ովքեր նախանձախնդիր են, որ իրենց զավակները կրթվեն հայի ոգով եւ ազգային գիտակցությամբ:

Համայն հայության նվիրական կենտրոնում նման ջերմ ընդունելության համար Վեհափառ Հայրապետին ճեմարանականների անունից իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց ճեմարանի հայոց լեզվի ուսուցչուհի Բեթի Մարաշլյանը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը պատասխանեց սաներին հետաքրքրող հարցերին, որոնք առնչվում էին Հայ Եկեղեցու ներկայիս կյանքին ու մեր ժողովրդի մեջ նրա ստանձնած առաքելությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Սեպտեմբերի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական-աստվածաբանական խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում, ի շարս քննարկվող հարցերի, անդրադարձ կատարվեց նաեւ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից առաջարկվող «Խղճի եւ կրոնական ազատությունների» մասին օրինագծին:

Այս առնչությամբ խնդրո առարկա հարցերի լուծման մեջ խորհուրդն ընդգծեց կարեւորությունը հարազատ մնալու հայ ժողովրդի ազգային եւ մշակութային ավանդույթներին, հարգելու մարդու հիմնարար ազատությունները եւ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ավանդական եկեղեցիների ու ազգային-կրոնական փոքրամասնությունների իրավունքները:

Նիստի ընթացքում խորհուրդն անդրադարձավ Հայաստանում Ավետարանական համայնքների

եւ խարիզմատիկ շարժումների ներկայացուցիչների գործունեությանը՝ դատապարտելով հասարակության մեջ կրոնական անհանդուրժողականության պատրանք ստեղծելու եւ այս պայմաններում արտոնություններ կորզելու նրանց մերժելի գործելակերպը: Խորհուրդն անընդունելի համարեց նաեւ Ավետարանական համայնքների հովիվների գործողությունները՝ հորդորելով հրաժարվել հոգեորսության միջոցով իրենց համայնքներն ընդլայնելու մտադրություններից եւ որդեգրած հակաէկումենիկ ընթացքից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են նոր նշանակումներ:

Լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հովնան վարդապետ Հակոբյանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսարարապետ:

Գեղարդավանքում սպասավորող Տ. Տարոն աբեղա Ղուլիկյանը նշանակվել է Սուրբ Գեղարդ վանքի վանահայր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ